կան կապիտալի իշխանությունը։ Հայտնի է, որ Կիլիկիայում ոչ մի ժամանակ հայոց եկեղեցին Կիլիկյան հայկական պետության վրա չի ունեցել գերիշխող դիրք, այն ինչ որ բնորոշ էր արևմտաեվրոպական թագավորությունների համար, որտեղ կաթոլիկ եկեղեցին պետություն էր պետության մեջ։ Այդպիսի ասպետական օրդենների կազմակերպման անհրաժեշտություն չէր զգացվում նաև այն պատճառով, որ Կիլիկիայի հայ ձիավոր-ասպետները չէին հետապնդում ուրիշի երկրները զավթելու և կողոպտելու նպատակ, ինչպիսիք էին հոգևոր ասպետական օրդենների նպատակները, այլ հայ ձիավորի նպատակն էր պաշտպանել Կիլիկյան հողում վերականգնված հայ պետականությունը և նրա սահմանները, ապահովել ու պաշտպանել թուրք-սելջուկյան և մոնղոլական արշավանքներից ու բարբարոսություններից մազապուրծ ազատված հայ զանգվածների կյանքն ու ունեցվածքը։ 14-րդ դարի Կիլիկյան տաղասաց Հովհաննես Թլկուրանցու կողմից հյուսված «Հայ քաջազուն ասպետ, ավագ մարաջախտ և սպարապետ Լիպարիտի մասին» արձակ դյուցազներգությունը ապացույց է Կիլիկիայի հայ ձիավոր-ասպետի հետապնդած վերոհիշյալ վեհ նպատակներին[100]։ Նույն ոգով է ավանդված և տոգորված նաև «Ասպետը և իր ընկերները»[101] ավանդությունը, ինչպես և 13-րդ դարի անանուն հիշատակագրի՝ Սմբատ սպարապետի մահը արձանագրող հիշատակարանը[102]։

---

100 «Հանդէս Ամսօրեայ», 1933, էջ 129—138։

101 «Կոչնակ», 1931, էջ 234—235։

102 «Բազմավէպ», 1876, էջ 318։